ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 ապրիլի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

48
(2898)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ, ԲԱՅՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ Է ՍՏԱՆՈՒՄ



ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իրեն ռեֆերենտ է նշանակել Էդգար Մուրադյան անուն- ազգանունով մի մարդու, որը աշխատանքի չի ներկայանում, բայց պարգեւ ու աշխատավարձ ստանում է: «Ժողովուրդ» օրաթերթը հերթական աղմկահարույց բացահայտումն է արել:

Եւ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթը հարցում ուղարկեց ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ներկայացնելով, որ «Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցիչը շրջել է ԱԺ նախագահի աշխատակազմի աշխատասենյակի միջանցքներով, ԱԺ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչների աշխատանքային սենյակները արձանագրել է, սակայն Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտն ավարտած Էդգար Մուրադյանի աշխատասենյակը, դրա մասին վկայող ցուցանակը չկա:

Հարց. 1. Էդգար Մուրադյանը վերջին 6 ամիսների ընթացքում քանի՞ անգամ է աշխատանքի հաճախել. խնդրում ենք տրամադրել ՊՊԾ անցակետի միջոցով նրա աշխատանքի ներկայանալու հավաստիացումները:

2. Որտե՞ղ է աշխատանքային գործունեությունը ծավալում Էդգար Մուրադյանը, ո՞ր սենյակում, եւ ինչո՞ւ չկա ցուցանակ:

3. Կոնկրետ ի՞նչ աշխատանքներ է իրականացնում նա՝ստանալով աշխատավարձ եւ պարգեւավճար պետության միջոցներից:

4. Ճի՞շտ է, որ ԱԺ նախագահի խորհրդական Աշխեն Հայրապետյանը ամսական տաբելը լրացնելիս ԱԺ նախագահի հրահանգով մշտապես Էդգար Մուրադյանի անվան դիմաց ներկա է գրել՝ապահովելով նրա՝աշխատավարձի ամբողջական ստացումը:

5. Իրականում Էդգար Մուրադյանի աշխատավարձը ստանում է ինքը՝Մուրադյա՞նը, թե՞ նրա բանկային քարտին փոխանցված գումարը ձեր մտերիմներից մեկին է փոխանցվում եւ ի՞նչ նպատակով:

Ի պատասխան՝ԱԺ նախագահի մամուլի խոսակ Նելի Դուրյանը հաստատել է մեր բոլոր ինֆորմացիաները, որոնք շարադրված էին հարցերում: Ճիշտ է, հրաժարվել է տրամադրել Էդգար Մուրադյանի մուտք ու ելքի մասին հստակ տեղեկություն, բայց հայտնել է, որ, այո, Էդգար Մուրադյանը հեռավար է աշխատում, այսինքն՝աշխատանքի չի գալիս, առանձնացված սենյակ, համապատասխան ցուցանակ ու աշխատանքային պայմաններ չկան նրա համար: «Անհրաժեշտության դեպքում աշխատում է ԱԺ նախագահի աշխատակազմին հատկացված ընդհանուր աշխատասենյակներից մեկում»,- գրել է ԱԺ նախագահի խոսնակը: Այսինքն՝ միայն անհրաժեշտության դեպքում է աշխատում, իսկ իրականում կան ամիսներ, որ ընդհանրապես ԱԺ չի մտել ռեֆերենտը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Շարունակվող բռնությունը կարող է խաթարել տեւական ու արժանապատիվ խաղաղության ուղղությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի ունեցած առաջընթացը: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝այս մասին հայտնել են Հայաստանում ԱՄՆ դեսպանությունից: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը ապրիլի 1-ին գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինին՝խնդրելով պատասխանել մի քանի հարցերի՝ Տավուշի գյուղերի հանձման վերաբերյալ արված Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների առնչությամբ: ԱՄՆ դեսպանին, մասնավորապես, խնդրել էինք պատասխանել, թե ինչ տեղեկություններ կան դեսպանի մոտ, որտեղ է սկսվում եւ որտեղ է ավարտվում Հայաստանի Հանրապետությունը: Ո՞ր թվականի քարտեզներն է միջազգային հանրությունը համարում լեգիտիմ եւ առաջարկում սահմանազատումն իրականացնել այդ քարտեզներով: Ինչո՞ւ դեսպանը՝որպես միջազգային հանրության վառ ներկայացուցիչ, չի գործադրում ջանքեր, որպեսզի Ադրբեջանը, որ 2021 թվականից օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքները Սյունիքի, Գեղարքունիքի եւ Ջերմուկի հատվածներում, հետ քաշվի: Իսկ եթե գործադրում է ջանքեր, ապա ինչո՞ւ չկա հաջողություն: ՀՀ վարչապետը մարտի 18-ին՝Տավուշի մարզում բնակիչների հետ հանդիպման ժամանակ, հայտարարել է, որ եթե 1 շաբաթվա ընթացքում սահմանազատման գործընթացը չսկսվի, այսինքն՝տարածքները չհանձնվեն, ապա պատերազմ է սկսվելու: Դեսպանն ի՞նչ տեղեկություն ունի, արդյոք պատերազմը անխուսափելի՞ է, եւ եթե հարձակում լինի ՀՀ վրա, ինչպե՞ս կարձագանքի դրան միջազգային հանրությունը: Ի պատասխան մեր այս հարցերի՝ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը տվել է այսպիսի պատասխան. «Միացյալ Նահանգներն աջակցում է Հայաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը: Հուսով ենք, որ Հայաստանն ու Ադրբեջանը կստորագրեն տեւական խաղաղության համաձայնագիր, որով կճանաչվի այդ ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը. եւ ինչքան շուտ, այնքան լավ: Միացյալ Նահանգները հստակ մատնանշել է, որ այս հակամարտությունը չունի ռազմական լուծում: Մենք կարծում ենք, որ շարունակվող բռնությունը կարող է խաթարել տեւական ու արժանապատիվ խաղաղության ուղղությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի ունեցած առաջընթացը»:



Իրավապահ համակարգը մոռացել է Երեւանի քաղաքապետարանի միջադեպի գործը: Քրեական վարույթից 5 ամիս անց քրեական հետապնդման ենթակա անձ չկա: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնի քննչական բաժին է հրավիրվել եւ հարցաքննվել Երեւանի ավագանու կին անդամներից ընդամենը մեկը՝Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը. նրանից հետո այլ անձ չի հարցաքննվել: Միջադեպից անցել է շուրջ 5 ամիս, եւ գործով ո՛չ մեղադրյալ կա, ո՛չ տուժող: Հիշեցնենք, որ ոստիկանությունից հաղորդում էր ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 21-ին՝Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն, հանգամանքները պարզվում են:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2024 թվականի հունվար ամսին ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության տակ գտնվող բանկերի ռեզիդենտներին տրված վարկերի, ավանդների, ֆակտորինգի, լիզինգի, ռեպո համաձայնագրերի ընդհանուր արժեքը հունվար ամսին կազմել է 3 մլրդ 353 մլն դրամ: Մեկ ամսում 3 մլրդ դրամ գումարները օգտագործվել են գյուղատնտեսության, անտառային տնտեսության եւ ձկնորսության համար, անտառային տնտեսության եւ փայտամթերումների, հանքագործական արդյունաբերության եւ բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրականության, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարման եւ այլ ծառայությունների համար: Գարնանային հողագործական աշխատանքների բացվելուն պես գյուղատնտեսության եւ բուսաբուծության համար վարկերի շեմը կտրուկ բարձրանում է: Օրինակ՝2023 թվականի մայիսին այն կազմել է 194 մլն 674 հազար դրամ: ՀՀ-ում, ըստ Կենտրոնական բանկի, բուսաբուծության զարգացման համար 2024 թվականի հունվարին ձեւակերպվել է 37 մլն դրամ վարկ, իսկ անասնապահության զարգացման համար՝3 մլն 901 հազար դրամ: Պետությունն ամեն տարի գյուղատնտեսությունը զարգացնող նոր նախագծեր է նախաձեռնում, սակայն ամեն տարի գյուղատնտեսները բախվում են ավելի ու ավելի լուրջ խնդիրների: Տարեվերջին գյուղատնտեսների առաջ լճացում անունով պատ է ձեւավորվում, բերքը սակավ վաճառքի պատճառով նեխում է պահեստներում, իսկ պետությունից այդպես էլ ոչ մի արձագանք չեն ստանում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԱՅՍՕՐ ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ՓԱԿ ԴՌԱՆ ԱՌԱՋ»

Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, «Գոյ» թատրոնը անժամկետ նստացույց է սկսել հենց թատրոնի դիմաց:

Թատրոնի ամբողջ անձնակազմը պահանջում է, որ չոտնահարեն իրենց իրավունքները, բացեն թատրոնի մուտքը, որպեսզի կարողանան մուտք գործել իրենց հարազատ թատրոն:

«Գոյ» թատրոնի կառավարման խորհրդի նախագահ Սարգիս Արզումանյանը երեկ ArmLur.am-ի հետ զրույցում նշել է, որ նստացույցով չեն բավարարվելու, եւ սպասվում են գործողություններ:

Ռեժիսորը նաեւ ասաց, որ թատրոնը փակելու հիմնական դրդապատճառներից մեկն այն է, որ թատրոնը քաղաքական պատվեր չի կատարում:

-Պարոն Արզումանյան, երեկ ամբողջ գիշեր մնացել եք, նստացույց եք իրականացրել, քաղաքացիներ մոտեցե՞լ են, օգնություն առաջարկե՞լ են:

-Երեկ՝ ժամը 16:00-ից, նստացույց հայտարարվեց իմ կողմից, միացան իմ ընկերները, որոնք որոշ ժամանակ լինում են այստեղ եւ գնում են: Ես 24 ժամ ռեժիմով եմ այստեղ, իսկ քաղաքացիներ, իհարկե, եղել են, փորձել են հասկանալ, լսել են նստացույցի մասին, մանրամասներին փորձում եմ ծանոթացնել: Մարդիկ կան, որ նույնիսկ ինձ գրել են,զանգահարել են, հետաքրքրված են այս հարցով, ժամը 13.00-ից հետո կան հանդիպումներ նախատեսված, մշակութային գործիչներ կան, որ ուզում են հանդիպել: Ուզում եմ ասել՝ կա հետքրքրվածություն հանդիսատեսի եւ մշակութային գործիչների կողմից:

-Նախարարությունից ինչ-որ արձագանքի սպասո՞ւմ եք, որ հնարավոր է՝ ձեզ ընդառաջ գնան, ձեր պահանջները բավարարեն:

-Նախարարությունից սպասելիքը այնքանով է, ինչքանով որ Ժաննա Անդրեասյանը արել է հայտարարություն, ասաց, որ իրենք պատրաստ են աջակցելու, խրախուսելու: Այսքանով մենք սպասում ենք, որ նախարարը հետամուտ լինի իր արած խոստմանը. այդքանով ենք սպասում: Մենք կարծում ենք, որ եթե պաշտոնատար անձը բան է ասում, ուրեմն դա պիտի կատարի: Մենք նորից ներկայացրինք իրենց մեր ծրագիրը, եւ այս նստացույցը միտված է դրան, որ այստեղ սպասելու եմ ես, որ կառավարությունը, Ժաննա Անդրեասյանը որոշում կայացնեն կամ որոշման մեջ կատարեն փոփոխություններ:

-Իսկ Սունդուկյանի թատրոնից ինչ-որ արձագանքներ ստացե՞լ եք՝ կապված նստացույցի հետ, որովհետեւ մի քանի օր առաջ, երբ այստեղ ակցիա էր իրականանում, կարծես այդքան էլ համաձայն չէին, որ այս մուտքը բացվի:

-Դե, բնականաբար, չէր կարող աջակցություն լիներ, որովհետեւ սա իրենց պատճառով է եղել, որ մենք այսօր կանգնած ենք փակ դռան առաջ: Երեկվանից ես այստեղ եմ, ու ոչ ոք չի մոտեցել Սունդուկյան թատրոնից՝ գոնե հարցնի:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ապրիլի 3-ը Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման օրն է, ինչի առթիվ ուղերձ է հղել ՀՀ-ում ՌԴ դեսպանությունը.

«32 տարի առաջ՝ 1992 թվականի ապրիլի 3-ին, Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության՝ հետխորհրդային երկու նոր պետությունների միջեւ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Այս համաձայնագիրը նոր փուլի սկիզբ դրեց մեր երկրների փոխհարաբերություններում, որոնց ժողովուրդները մշտապես միմյանց վերաբերվել են առավել բարեկամական եւ ջերմ զգացմունքներով: Այս հիմնական փաստաթղթից ընդամենը մի քանի տարի անց երկու երկրների միջեւ ստորագրվեց բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության պայմանագիր,եւ դա պատահական չէ:

Ռուսաստանը մշտապես հատուկ նշանակություն է տվել Հայաստանի հետ բարեկամական կապերի ամրապնդմանը՝ որպես դաշնակից եւ կարեւոր գործընկեր: Նաեւ ընդհանուր ավանդական արժեքներին եւ ազգային ինքնությանը հավատարիմ մեր ժողովուրդները միշտ բաց են եղել եւ շահագրգռված են փոխադարձ երկխոսության համար: Անցած ժամանակի ընթացքում մենք մեծ ճանապարհ ենք անցել: Դրական, կառուցողական փոխգործակցության անգնահատելի փորձ է կուտակվել՝ ի շահ երկու շահագրգիռ կողմերի:

Մեր փոխհարաբերություններում շատ կարեւոր դեր է խաղում նաեւ անվտանգային ոլորտը: Հայաստանում եւ, ընդհանուր առմամբ, Հարավային Կովկասում կայունության ապահովման անգնահատելի գործոն շարունակում է մնալ ռուսական 102-րդ ռազմաբազան եւ ռուս սահմանապահների ներկայությունը:

Ռուսաստանն ու Հայաստանը գտնվում են ընդհանուր ինտեգրացիոն միավորումներում՝ ԵԱՏՄ-ում, ՀԱՊԿ-ում եւ ԱՊՀ-ում: Մենք համագործակցում ենք ՄԱԿ-ի կառույցներում, միջազգային այլ ձեւաչափերում: Մեր երկրների միջեւ գործում են ամենատարբեր ոլորտներում համագործակցության շուրջ երկու հարյուր համաձայնագրեր: Գործում են երկկողմ համագործակցության բազմաթիվ մեխանիզմներ գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած տնտեսական եւ ռազմատեխնիկական, վերջացրած միջտարածաշրջանային կապերով եւ երիտասարդական համաժողովներով:

Դինամիկ զարգանում է փոխգործակցությունը տնտեսության ոլորտում: Ռուսաստանը Հայաստանի խոշորագույն առեւտրային գործընկերն է՝ արտաքին առեւտրում 35,4 տոկոս ընդհանուր մասնաբաժնով, ինչպես նաեւ առանցքային ներդրող՝ ավելի քան 40 տոկոս տեսակարար կշռով: Երկկողմ առեւտրաշրջանառության ընդհանուր ծավալը 2023 թվականի 11 ամիսների ընթացքում կազմել է 6,3 մլրդ դոլար: (40,8% աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ): Հանրապետության տնտեսության առաջատար ճյուղերում գործում են ռուսական կապիտալի 100 տոկոսանոց կամ մասնակի մասնակցությամբ ավելի քան 40 խոշոր ձեռնարկություններ, որոնցից շատերը Հայաստանի խոշորագույն հարկատուներն ու գործատուներն են: Տեղական ձեռնարկատերերն ավանդաբար մեծ ուշադրություն են դարձնում բիզնեսի սոցիալական պատասխանատվությանը, իսկ նրանց կողմից բացված ձեռնարկությունները Հայաստանի բիզնես լանդշաֆտի անբաժանելի մասն են եւ իրենց ներդրումն են ունենում հանրապետության զարգացման գործում:

Հատկանշական է, որ Միության երկրների շարքում 2023 թվականին տնտեսական աճի տեմպերով առաջատարը հենց Երեւանն է: Նախորդ տարի Հայաստանի արտահանումը Եվրասիական տնտեսական միության երկրներ աճել է 41%-ով եւ կազմել 3,6 մլրդ դոլար»,- ասվում է ուղերձում:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Կառավարությունն իր ապրիլի 4-ի նիստում հաստատել է Քաղաքաշինության բնագավառում վերարտակավորման կարգը: Ըստ հիմնավորման՝ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական կրթության, վերարտակավորման եւ շարունակական մասնագիտական զարգացման գործընթացները գտնվում են բոլոր երկրների զարգացման եւ կառուցապատողներին որակյալ մասնագիտական ծառայությունների տրամադրման հիմքում:

Միջազգային փորձը փաստում է, որ շարունակական մասնագիտական զարգացումը (ՇՄԶ) նպաստում է կապալառու կազմակերպությունների կողմից ծառայությունների որակի բարձրացմանը: Մասնագիտական գործունեության թույլտվությունը որոշակի ժամանակային պարբերականությամբ պետք է թարմացվի, եւ դա կապակցվում է վերարտակավորման կրեդիտների պահանջների կատարման հետ: ՇՄԶ ստեղծման հիմք է հանդիսանում վերարտակավորման համակարգի ներդրումը:

Ներկայումս Հայաստանում չի գործում քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման օբյեկտիվ եւ արդյունավետ համակարգ, չի իրականացվում մասնագետների որակական մակարդակի գնահատման գործընթաց: Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է մասնագետների որակավորման բարձրացման նպատակով քաղաքաշինության բնագավառում վերարտակավորման համակարգի ներդրում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով: Կստեղծվի որակավորված մասնագետների վարկանիշավորման ցանկ՝ համապատասխան ռեգիստրի ստեղծմամբ:

ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳ

Հայաստան-Եվրամիություն գործընկերության նոր օրակարգի մշակումը սկսվել է փետրվարին, եւ այս աշխատանքի նպատակը Հայաստանի հետ հարաբերությունների հետագա խորացումն է: Այս մասին ապրիլի 4-ին՝ Ազգային ժողովում «Հայաստանի եվրաինտեգրման նոր հեռանկարներն ու մարտահրավերները» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ, հայտարարեց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը:

Նրա խոսքով՝ նոր օրակարգը, որի վրա ներկայումս աշխատանքներ են տարվում, կոչված է թարմացնելու գործող համագործակցության օրակարգը: Այն հիմնված է լինելու CEPA-ի համաձայնագրի վրա: «Այն նաեւ առաջնահերթություն կդնի, թե ինչպես մենք միասին աշխատենք՝ օգնելու ավելի արագ հասնել CEPA-ի նպատակներին եւ հասկանալ, թե ավելին ինչ կարելի է անել: Նոր օրակարգը հիմնված է լինելու նախկին համագործակցության վրա, բայց ավելի առարկայական»,- ասել է Մարագոսը: Զարգացման ընթացքում, ինչպես նշեց դեսպանը, հաշվի են առնվում մի շարք տարրեր, ինչպիսիք են մարդու իրավունքները եւ ժողովրդավարությունը, արտաքին քաղաքականությունն ու անվտանգությունը, տնտեսական համագործակցությունը եւ ոլորտային խնդիրները, ինչպես նաեւ էներգետիկան, առեւտրատնտեսական բազմազանությունն ու դիվերսիֆիկացիան, ենթակառուցվածքները եւ այլն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ ՉԿԱ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Օրերս տեսակցության էի գնացել քաղբանտարկյալ Արմեն Աշոտյանին: Նա ժողովրդավարական Հայաստանի քաղբանտարկյալներից է, ում գործի շինծու լինելու մասին որեւէ մեկը թերեւս արդեն կասկած չունի: Այս գործով անգամ տուժողին չեն կարողանում գտնել դատական կամ իրավապահ այլ մարմինները: Բայց Արմեն Աշոտյանը մոտ 10 ամիս է՝ անհիմն գտնվում է կալանքի տակ:

Ապրիլի 10-ին դատավոր Վահե Դոլմազյանը պետք է քննի Աշոտյանի կալանքի հարցը՝ որոշելով քաղբանտարկյալը կշարունակի մնալ կալանքի տակ, թե նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը կփոխարինվի այլ տեսակով: Եթե շարունակվեց նրա կալանքը, նշանակում է, որ Վահե Դոլմազյանը կատարում է քաղաքական հրահանգ, քանի որ Աշոտյանին կալանքի տակ պահելու որեւէ իրավական հիմք չկա:

Ուզում եմ տեղեկացնել, որ Արմեն Աշոտյանի գործով հրատապ գրություններ եմ ուղարկել Հայաստանում հավատարմագրված բոլոր դեսպաններին, միջազգային կարեւորագույն կառույցներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող բազմաթիվ կազմակերպությունների՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ապրիլի 10-ի դատական նիստի վրա: Ինչ վերաբերում է Աշոտյանի տրամադրությանը, ապա այն, ինչպես միշտ, բարձր էր, մարտական: Միակ մտահոգությունը, որ ուներ մեր երկրին պատուհասած վտանգների առիթով էր, որոնք Նիկոլ Փաշինյանի իշխանությունը իր սադրանքներով եւ ոչ կոմպետենտությամբ բերել հասցրել է կրիտիկական պահի»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ՀԱՐՑ

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Դեւիդ Քեմերոնը բացառել է արեւմտյան զորքերի ուղարկումն Ուկրաինա: BBC-ի հարցազրույցում Քեմերոնն ասել է, որ «եթե դաշնակիցները չավելացնեն աջակցությունը, պատերազմը տանուլ կտրվի»:

Բայց ի պատասխան այն հարցի, թե պետք է արդյոք արեւմտյան պետություններն Ուկրաինա ուղարկեն իրենց զինծառայողներին, նախարարն ասել է. «Ոչ: Մենք Պուտինին նման թիրախ տալ չենք ուզում: Ի վերջո, դա քաղաքական կամքի հարց է»,- ասել է Քեմերոնը:

Նա նշել է, որ հաջորդ շաբաթ երկրորդ այցն է կատարելու ԱՄՆ, որպեսզի Կոնգրեսին հորդորի ավելի շատ միջոցներ հատկացնել Ուկրաինային աջակցելու համար:

Ուկրաինա արեւմտյան զորքերի ուղարկման հնարավորության մասին վերջերս հայտնել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Նրա արտահայտություններից հետո ՆԱՏՕ հիմնական երկրները, այդ թվում ԱՄՆ-ն եւ Գերմանիան, հայտարարել են, որ Ուկրաինա ՆԱՏՕ զորքեր ուղարկելու հարց դրված չէ:

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին նշել է, որ Կիեւը երբեք այդ մասին չի խնդրել դաշնակիցներին:

ՆԱՄԱԿ

«ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենի եւ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի՝ ապրիլի 5-ին Բրյուսելում նախատեսված համատեղ հանդիպմանն ընդառաջ, «Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը նամակով դիմել է Եվրոպական միության ղեկավարությանը՝ բարձրացնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի բնակապահովության հարցը: Այս մասին հայտնում է «Եվրոպացիները հանուն Արցախի» նախաձեռնությունը:



Նամակում մասնավորապես ասվում է. «Որպես ԵՄ քաղաքացիներ՝ մենք դիմում ենք ԵՄ ղեկավարությանը՝ ֆինանսական միջոցներ հատկացնել Արցախից բռնի տեղահանված հայ բնակչությանը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) բնակարանային արժանապատիվ պայմաններով ապահովման համար՝ մինչեւ պաշտպանության միջազգային մեխանիզմների երաշխավորումը, որոնցով հնարավոր կլինի ապահովել նրանց հավաքական վերադարձն Արցախ: Ջուգահեռներ տանելով 1988թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժին հաջորդած միջազգային բնակարանաշինական նախագծերի հետ, հարթակը նաեւ հուշում է, որ նմանատիպ նախաձեռնությունները կարող են միջնաժամկետ լուծում տալ՝ կանխելով հազարամյա մշակույթի ոչնչացումը:

«Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակն ընդգծում է Եվրոպական միության դերը որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների հիմնական միջնորդ, երբ 2021 թ. բանակցային գործընթացն առաջնորդում էր Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը: Նամակում ասվում է, որ թեեւ ԵՄ-ն շարունակաբար ընդունում էր Արցախի հայության մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ ԵՄ ղեկավարությունը հաճախ շեշտում էր Արցախահայության «ինտեգրման» կարեւորությունը Ադրբեջանում եւ հանդես էր գալիս դրա օգտին նույնիսկ այն ժամանակ, երբ Ադրբեջանը շրջափակման եւ սովամահության էր ենթարկում նրանց եւ իրականացնում էր ռազմական ագրեսիա: Հարթակը հղում է անում Եվրոպական խորհրդարանի 2023 թ. հոկտեմբերի 5-ի բանաձեւին, որն արտահայտում է «խորը դժգոհություն այն փաստի առնչությամբ, որ Եվրախորհրդարանի ահազանգերը Արցախի իրավիճակի եւ աղետալի հետեւանքների ռիսկերի վերաբերյալ անտեսվել են Եվրահանձնաժողովի եւ Եվրոպական խորհրդի կողմից:

Նամակի հեղինակները շեշտում են, որ անպատժելիությունը միայն քաջալերեց Ադրբեջանի հետագա կործանարար քաղաքականությունը»:

Նամակում նաեւ շեշտվում է. «Եթե ռուս խաղաղապահների անգործությունը թույլ տվեց Ադրբեջանին իրականացնել իր զազրելի հանցագործությունը, այնուամենայնիվ ԵՄ-ն նույնպես կրում է պատասխանատվության իր բաժինը վերը նշված պատճառներով: Խոսքը չի վերաբերում Եվրոպական խորհրդարանին, որը պատվով կատարեց դերը որպես ժողովրդավարության պալատ եւ շարունակաբար անաչառ դիրքորոշում էր ցուցաբերում իրավիճակի վերաբերյալ»:

Նշվում է, որ էթնիկ զտումների հետեւանքով տասնյակ հազարավոր բռնի տեղահանված հայեր ապաստան են գտել ՀՀ-ում: «Թեեւ Հայաստանի կառավարությունը ջանքեր է գործադրել նրանց կարճաժամկետ կարիքները հոգալու ուղղությամբ, բայց եւ այնպես դրանք բավարար չեն արժանապատիվ կյանք ապահովելու համար: «Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը երախտագիտությամբ է ընդունում ԵՄ կողմից մարդասիրական օգնության հատկացումը ԼՂ-ից բռնի տեղահանված հայերին աջակցելու համար: Այնուամենայնիվ, այդ մարդասիրական օգնությունը լուծում է միայն կարճաժամկետ կարիքները: Փաստացի, արդեն մի քանի հազար արցախահայեր արդեն լքել են Հայաստանի Հանրապետությունը եւ չեն վերադարձել: Սա իրական աղետ է: Եթե իրավիճակը շարունակվի, ժամանակի ընթացքում արցախահայության ուրույն մշակույթը եւ բարբառները կվերանան»,- ասված է նամակում: Հիշյալ նամակն ուղղված է Եվրոպական միության ղեկավարությանը՝ մասնավորապես Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելին, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենին, ԵՄ հարեւանության եւ ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվիեր Վարհելիին, ԵՄ արտաքին եւ անվտանգային քաղաքականության բարձր հանձնակատար Ժոզեպ Բորելին, Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամերի հարցով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարին, ինչպես նաեւ Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլային: Նամակը հասցեագրվելու է նաեւ ԵՄ անդամ-պետությունների կառավարություններին, մասնավորապես՝ այն երկրների կառավարություններին, որտեղ, «Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը ներկայացուցչական մարմին ունի:

«Եվրոպացիները հանուն Արցախի» շարժումը համաեվրոպական համագործակցային հարթակ է, որը միավորում է հայ համայնքի ներկայացուցչական մարմինները եվրոպական 15 երկրներում: Հարթակի առաջին նախաձեռնությունը Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, ինչպես նաեւ ԵՄ անդամ պետությունների ղեկավար անձանց հասցեագրված նամակ էր՝ արցախահայությանն աջակցելու հորդորով, որը ստորագրել էին ավելի քան 500 եվրոպական կազմակերպություններ: Հարթակի առաքելությունն է համախմբել եվրոպական երկրների քաղաքացիներին՝ աջակցելով արցախահայության հիմնարար իրավունքների իրացմանը, միաժամանակ բարձրացնել Եվրոպայի քաղաքական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում այս խնդրի վերաբերյալ իրազեկվածությունը:

ՆԳՆ

ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՄԻՔՈՑԱՌՄԱՆԸ

Ապրիլի 3-ին ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանն ու Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության (ՄՔԾ) պետ Արմեն Ղազարյանը մասնակցել են ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ)՝

«Ամրապնդելով միգրացիայի ոլորտում քաղաքականության հիմքերի եւ կարողությունների արդյունավետ կառավարումը, Հայաստանում ապաստանի տրամադրման կառավարման զարգացումը եւ ՄՔԾ վերակազմակերպման աջակցությունը» ծրագրի մեկնարկի առթիվ կազմակերպված միջոցառմանը:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ոլորտի այլ կազմակերպությունների պատվիրակներ:

Արփինե Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Եվրոպական Միությանը, ծրագրի շրջանակներում իմպլեմենտացնող բոլոր կառույցներին՝ երկարատեւ համագործակցության համար: Նա նշել է, որ գործընկերությունն աստիճանաբար վերածվել է միասնական նպատակի, արժեհամակարգի իրացման համագործակցության:

Արփինե Սարգսյանը կարեւորել է միջազգային գործընկերների օժանդակությամբ եւ կայուն համագործակցության արդյունքում առկա ծրագրի շրջանակներում այն թիրախները, որոնք միտված են ինչպես միգրացիոն կառավարման նոր սխեմայի առաջքաշմանը, այնպես էլ այնպիսի անձնակազմի եւ մեթոդաբանությամբ աշխատանքին, որը թույլ կտա հանրությանը մատուցվող ծառայությունների տեսանկյունից սահմանել նոր նշաձող եւ հետեւողականորեն ամրապնդել այն:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնում ֆինություն է իրականացվում՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության հերթական դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս՝ 2024թ. մարտի 30-ին, Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտայից Ոստիկանության համապատասխան բաժին են տեղափոխվել 36 եւ 42-ամյա տղամարդիկ՝ վերջինիս կողմից շահագործվող «Օպել» մակնիշի ավտոմեքենայով: 36-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է պոլիէթիլենային տոպրակ՝ լցված սպիտակ բյուրեղանման, թմրամիջոցի նմանվող զանգվածով:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում նշանակված դատաբուսաբանական եւ դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ հայտնաբերված 570,81 գրամ քաշով բյուրեղանման զանգվածը «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց է:

Քննությամբ պարզվել է, որ Արարատի մարզի գյուղերից մեկի 36-ամյա բնակիչը, ով զբաղվում է բեռնատար ավտոմեքենայով Իրանից Հայաստան շինարարական ապրանքների տեղափոխմամբ, 2024թ. մարտի 30-ին իր համագյուղացի 42-ամյա տղամարդու հետ վերջինիս պատկանող եւ որպես տաքսի շահագործվող «Օպել» մակնիշի ավտոմեքենայով ուղեւորվել է Կոմիտաս 7 հասցեին հարակից հատված, ապա շահադիտական դրդումներով, ինքնությունը չպարզված անձից իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել եւ նույն նպատակով իր մոտ ապօրինի պահել է առանձնապես խոշոր չափերով՝ 570,81 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: Այն իր հետ ապօրինի տեղափոխելով՝ նույն տաքսով ուղեւորվել է Երեւան քաղաքի Կոմիտասի փողոցի մեկ այլ հասցեում գտնվող ռեստորանի դիմացի հատված, սակայն ոստիկանության ծառայողների կողմից ապօրինի թմրամիջոց պահելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել է:

36-ամյա տղամարդու նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելու մասին, որը բավարարվել է:

Կատարվել են խուզարկություններ, հետաքննության մարմնին հանձնարարություններ են տրվել՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնել՝ 36-ամյա տղամարդու մոտից հայտնաբերված թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը, թմրամիջոցի ապօրինի շրջանառության մեջ ներգրավված այլ անձանց ինքնությունը պարզելու, հայտնաբերելու ուղղությամբ: Ձերբակալված 42-ամյա տղամարդը անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու հիմքով արգելանքից ազատ է արձակվել:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԱՅՑԵԼՈՒՆ

Ապրիլի 2-ին՝ ժամը 10:50-ի սահմաններում, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Նուբարաշեն» տարածքային բաժնի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողների հետ միասին խուզարկության են ենթարկել դատապարտյալ Ա.Մ.-ի մոտ կարճատեւ տեսակցության եկած քաղաքացի Ս.Ս.-ին:

Խուզարկության ընթացքում վերջինս, պատասխանատվությունից ենթադրաբար խուսափելու եւ իրեղեն ապացույցից ազատվելու համար, իր տաբատի գոտկատեղից անմիջապես հանել եւ նետել է փաթեթ, որի զննությամբ հայտնաբերվել է եւս 4 փաթեթ: Դրանցից երկուսում առկա է եղել ընդհանուր 1,05 գրամ մեթամֆետամին տեսակի թմրամիջոց, իսկ մյուս երկու փաթեթներում՝ ափիոն տեսակի թմրամիջոցին նմանվող զանգվածներ: Քաղաքացի Ս.Ս.-ն ձերբակալվել է օպերատիվ ծառայողների կողմից եւ ներկայացվել ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին: Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ԴԱՀԿ-ն տեղեկացնում է. «Հարգելի՛ քաղաքացիներ, տեղեկացնում ենք, որ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով՝ մինչեւ 2024 թվականի ապրիլի 5-ը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն կատարման ներկայացված, դեռեւս չկատարված եւ վերոնշյալ օրենքում նշված վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքի 50 տոկոսը եւ դրան համապատասխան կատարողական ծախսը վճարելու դեպքում պարտավորությունը կիսամարվի ամբողջությամբ կատարված:

Վճարումները քաղաքացիները կարող են կատարել ՀԿԱԾ cesa.am պաշտոնական կայքի «Անձնական գրասենյակ», «Հետախուզումներ» հարթակների, վճարահաշվարկային տերմինալների, բանկերի միջոցով, իսկ լրացուցիչ հարցեր առաջանալու կամ տեղում վճարում կատարելու համար կարող են այցելել Ծառայության քաղաքացիների սպասարկման գրասենյակ:

Հարկադիր կատարման փուլում վճարման համակարգերում արդեն արտացոլված է լինելու յուրաքանչյուր կատարողական վարույթով տուգանքի 50 տոկոսի եւ մնացորդ գումարի համար հաշվարկված կատարողական ծախսի գումարը, բացառությամբ այն վարչական իրավախախտումների, որոնց վրա վերոնշյալ օրենքի կարգավորումները չեն տարածվում:

Տուգանքի 50 տոկոսը տոկոսը վճարելու դեպքում կատարողական ծախսը կհաշվարկվի մնացորդ գումարի համար «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ մինչեւ 10000 դրամը՝ մնացորդ գումարի 50 տոկոսի չափով, 10000-100000 դրամի դեպքում՝ 5000 դրամ, իսկ 100000 դրամից բարձրը՝ մնացորդ գումարի 5 տոկոսը:

Նախատեսված արտոնությունից օգտվելու համար սահմանվել է եռամսյա ժամկետ: Կարգավորումները կգործեն վաղվանից՝ ապրիլի 5-ից»:

ՅՈՒՅՑԱԿ

ՄԻԵԴ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Երեկ հարցազրույցների փուլով մեկնարկել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատավորի պաշտոնում Հայաստանի թեկնածուի ընտրության մրցույթը: Հայաստանից ՄԻԵԴ դատավորի պաշտոնի համար մրցակցում են

1.Ալումյան Հայկ
2. Գրիգորյան Լիզա
3. Գրիգորյան Վահե
4. Կարապետյան Նորա
5. Մազմանյան Արմեն
6. Մարգարյան Աննա
7. Քոչարյան Վիգեն:

Ամենաբարձր միավորներ հավաքած թեկնածուների անունները մրցութային հանձնաժողովը պետք է ներկայացնի նախագահին:

5 օրվա ընթացքում այդ ցուցակը պետք է հաստատի Հայաստանի նախագահը, ապա, ըստ հաստատված կարգի, ցուցակն ուղարկվելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: ՄԻԵԴ անդամին ընտրելու են Եվրոպական դատարանում:

Եթե նախագահը չհաստատի ցուցակը, պետք է կրկին մրցույթ հայտարարվի:

Կարգի համաձայն՝ երեք թեկնածուների ցուցակում պետք է անպայման լինի իգական սեռի ներկայացուցիչ:

Նկատենք, որ թեկնածուներից ԲԴԽ անդամ Վիգեն Քոչարյանն առաջին անգամ չէ, որ նման ցանկություն է հայտնում՝ գնալ ՄԻԵԴ:

2014թ. հոկտեմբերին անցկացված մրցույթի արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ էին ստացել Արմեն Հարությունյանը, Արա Ղազարյանը եւ Վիգեն Քոչարյանը, սակայն սեռերի ներկայացվածության սկզբունքի ապահովման նպատակով մրցութային հանձնաժողովի որոշմամբ նրանցից առավել ցածր հանրագումարային միավոր ստացած Վիգեն Քոչարյանը փոխարինվել էր ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած իգական սեռի մասնակցով՝ Նելիկ Հարությունյանով:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի խորհրդատվական խումբը կարծիք էր հայտնել, որ ՄԻԵԴ-ում դատավորի թափուր տեղի համար Հայաստանի կողմից ներկայացված թեկնածուներից մեկը (Նելիկ Հարությունյանը) ոչ ամբողջովին է համապատասխանում «ճանաչված իրազեկ իրավագետ» լինելու չափանիշին: Նկատի ունենալով վերոհիշյալը՝ արտգործնախարարությունը որոշել էր Հայաստանի կողմից ներպետական մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը ԵԽԽՎ չուղարկել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ Է ՊԵՏՔ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝Տավուշի մարզի որ բնակավայրերի հողերն են ներկայումս գտնվում Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ, այդ բնակավայրերից յուրաքանչյուրից քանի հեկտար հողատարածք է գտնվում Ադրբեջանի վերահսկողության ներքո: Մարզպետարանից պատասխանել են. «Ադրբեջանին կից Տավուշի մարզի բոլոր սահմանամերձ բնակավայրերը ունեն տարածքներ առնչվող բախման սահմանագծի հետ, որոնց մի մասը դիտարկվում են հակառակորդի զինուժի կողմից, մի մասն էլ գտնվում է իրենց տիրապետության տակ, սակայն այն ճշգրիտ հաշվարկելու համար անհրաժեշտ է կատարել սահմանագծի գույքագրման աշխատանքներ, որի արդյունքում պարզ կդառնան Ձեր կողմից պահանջվող թվային տվյալները»:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

2020թ. ամռանը Իջևանի գինու, կոնյակի գործարանը առանց շինթույլտվության եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի (ՇՄԱԳ) գործարանի հարեւանությամբ՝ Աղստեւ գետի հունում, կատարել է մեծ ծավալի շինարարական աշխատանքներ, 700-800 մետր երկարությամբ գետի հունն ավերվել է, 1870 խորանարդ մետր ծավալով գետափի ժայռը վերացել է, Աղստեւի ափին կառուցվել է մեծ երկարությամբ բետոնե պատ, որի հետեւանքով Իջեւանի դենդրոպարկի ջրառն ավերվել է, դենդրոպարկն Աղստեւ գետից ոռոգման ջուր չի ստացել, դենդրապարկում շուրջ 60 տարում տնկված հազվագյուտ ծառերի եւ թփերի կեսը չորացել է: Բնապահպանական խախտումների համար Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի Տավուշի մարզային բաժինը Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տուգանել է 216 հազար դրամի, նաեւ 350 հազար դրամի չափով: Դիմել ենք Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին՝հարցնելով, թե Աղստեւ գետի եւ Իջեւանի դենդրոպարկի ջրառն ավերելու հետ կապված քրեական գործն ինչ ընթացք ունի, ով է այդ գործով ներգրավված որպես մեղադրյալ: Քննչական կոմիտեն պատասխանել է. «Տավուշի մարզի Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողը առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու եւ կոնյակի գործարանին հանձնելու եւ ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին (08.04.2003 թվականին ընդունված եւ 01.07.2022 թվականին ուժը կորցրած) ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության այս փուլում որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ»: Իրավապահ համակարգից տեղեկացա, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունին, Իջեւանի դենդրոպարկին պատճառված մեծ վնասները ճշտելու համար նշանակվել է փորձաքննություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԸ

ՄԻՆՉ ՕՐՍ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՉԻ ԵՂԵԼ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արտահերթ ընդհանուր ժողովը: Օրակարգում ՀՀ պետական բուհերի խոշորացման եւ գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման հարցի քննարկումն էր: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան:



«Ընդհանուր ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ ընդլայնված ժողովը հրավիրվել է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրենների առաջարկությամբ: ՀՀ ԳԱԱ նախագահը ներկայացրեց, որ մինչեւ 2022թ. կեսերը ՀՀ կառավարությունում զարգացվում էր Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում խոշորացված գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարությունը: «Կար որոշում յուրաքանչյուր տարի առնվազն երկու խոշորացված գերազանցության կենտրոն ստեղծել ԳԱԱ կազմում»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա նշեց, որ ՀՀ ԳԱԱ նախագահությունն ընդունել է երկու կենտրոնների ստեղծման որոշում եւ ուղարկել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն: Այդ ժամանակ քննարկվում էր «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նախագիծը, որում եւս նշված էր ԳԱԱ կազմում խոշոր կենտրոնների ստեղծման մասին: Սակայն, այդ օրինագիծը ՀՀ կառավարությունում ընթացք չի ստացել: «Հետագայում հասկացանք, որ դա կապված էր ակադեմիական քաղաքի գաղափարի հետ»,- ասաց Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ, այնուհետեւ քննարկվում էր բուհերի եւ ԳԱԱ ինստիտուտների ինտեգրման հարցը: «Այդ ժամանակ նախարարությունն ընդունեց ԳԱԱ ներկայացրած տարբերակը կրթության եւ գիտության ինտեգրման վերաբերյալ: Գաղափարը փոխվեց աստիճանաբար, առաջ եկավ մասնակի միավորման, որից հետո միավորման գաղափարը, ստեղծվեց աշխատանքային խումբ, ես էլ էի ներգրավված», - ասաց Աշոտ Սաղյանը: «Աշխատանքային խումբը մի քանի ամիս ակտիվ աշխատել է: ՀՀ ԳԱԱ-ն ներկայացրել է իր տարբերակը: Այնուհետեւ Գիտության կոմիտեն ներկայացրեց ակադեմիայի առաջարկի լրիվ հակառակ տարբերակը: Մեր վերջին հանդիպումը եղել է 2023թ. հունվարի 3-ին, երբ բուհերի հետ կապված ընդունվեց որոշում: Ինստիտուտների ինտեգրման հետ կապված հարցադրմանը եղավ արձագանք, որ կլինի լրացուցիչ քննարկում, կամ կառավարությունը կորոշի, թե որ առաջարկն է առաջ տանում: Դրանից հետո մինչ օրս որեւէ քննարկում չի եղել: Սակայն վերջերս՝ վարչապետի հետ հանդիպման ժամանակ, քննարկվել են ակադեմիայում առկա խնդիրները եւ բարեփոխումների պլանը: Վարչապետը նշել է, որ դեռեւս վերջնական քննարկում չի եղել, եւ վերջնական տարբերակ չկա», - ասաց Աշոտ Սաղյանը:

Նա հայտնեց, որ այնուհետեւ ԳԱԱ-ն համակարգի ինստիտուտների գիտական խորհուրդների որոշումներով ընդունված դիրքորոշումների հիման վրա 76-էջանոց փաստաթուղթ է ուղարկել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն: Դրանից մոտ երկու շաբաթ հետո շրջանառության մեջ է դրվել փաստաթուղթ, որում արդեն ԳԱԱ ինստիտուտները բաշխված են ըստ կլաստերների, եւ ստեղծված են աշխատանքային խմբեր: Այդ աշխատանքային խմբերում ակադեմիան չի ներառվել: «Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ մեր ինստիտուտների առաջարկները չեն քննարկվել կամ չեն ընդունվել: Այդ ժամանակ մենք ստացանք ահազանգներ մեր տնօրեններից, առաջարկեցին հավաքվել, քննարկել եւ գալ ընդհանուր դիրքորոշման: Դրա համար հրավիրվել է այս արտահերթ ժողովը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ ՀՀ ԳԱԱ-ում բարեփոխումներ անելու համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, կանոնադրական փոփոխություններ, անհրաժեշտ է անցկացնել ՀՀ ԳԱԱ անդամների ընտրություններ: «Առնվազն 4 անգամ մենք դիմել ենք այդ հարցերով, սակայն ընթացք չի ստացել: Տարբեր երկրներում, այդ թվում՝ եվրոպական, ես վերջերս շատ եմ եղել, տարբեր պետությունների ակադեմիաների հետ պայմանագրեր ենք կնքել, հանդիպել եւ խոսել եմ պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ: Բոլորն էլ բարձր կարծիքի են հայկական գիտության, հայոց Գիտությունների ազգային ակադեմիայի մասին, հարգալից վերաբերմունք բոլոր պետություններում բացի մեկ պետությունից»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի ավագ գիտաշխատող Գայանե Շաբոյանը, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Թոփուզյանը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Հովակիմ Ջաքարյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական եւ դեղագործական քիմիայի եւ գիտատեխնոլոգիական կենտրոնի ավագ գիտաշխատող Արփինե Հարությունյանը, պատմաբան Ալեքսան Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշման նախագիծը: ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովն ընդունեց որոշման նախագիծը, որը հնչած առաջարկների հիման վրա կլրամշակվի եւ կդրվի շրջանառությանն մեջ»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԱՐՑԱԽ

ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ 97 մլն 035 հազար դրամ կհատկացվի ԼՂ-ից բռնի տեղահանված 5-12-րդ դասարանների շուրջ 17 հազար սովորողներին դասագրքերով ապահովելու համար:

Որոշումը երեկ ընդունվեց ՀՀ կառավարության նիստի ընթացքում:

«Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է ամբողջությամբ փոխհատուցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 5-12-րդ դասարանների սովորողների դասագրքերի ներդրումային գումարները»,- ասված է որոշման հիմնավորման մեջ: Հիշեցնենք, որ 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Արցախի վրա հարձակման հետեւանքով բռնի տեղահանվել է շուրջ 115 հազար անձ:

Ասել է թե՝ որոշման շնորհիվ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բոլոր սովորողներն ապահովված կլինեն դասագրքերով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 8 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՋՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների, այդ թվում՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Տաջիկստանի զինված ուժերի ներկայացուցիչները մասնակցում են Մոսկվայում ընթացող գլխավոր շտաբների պետերի կոմիտեի նիստին:

Նշվում է, որ նիստի ընթացքում Ռուսաստանի գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովը գործընկերներին տեղեկացրել է, որ նախորդ նիստին հաջորդած ժամանակահատվածում կոմիտեի կազմում փոփոխություններ են տեղի ունեցե. Ղազախստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ է նշանակվել Սուլթան Քամալետդինովը, իսկ Ղրղզստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ է դարձել Ռուսլան Մուկամբետովը:

Գերասիմովը ներկայացրել է նաեւ նիստի մյուս մասնակիցներին. «Նրանք են՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ադրբեջանական բանակի գլխավոր շտաբի պետ Քերիմ Վելիեւը, ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչ Արտակ Տոնոյանը, Բելառուսի ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, պաշտպանության առաջին փոխնախարար Վիկտոր Գուլեւիչը, Տաջիկստանի պաշտպանության առաջին փոխնախարար, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Էմոմալի Սոբիրզոդան, Ուզբեկստանի պաշտպանության առաջին փոխնախարար, ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Շուհրատ Խալմուհամեդովը»,- հայտնել է ՌԴ պաշտպանության նախարարությունը:

ՕԳՈՒՏ ՉԻ ՏՎԵԼ

Ըստ Պետական եկամուտների կոմիտեից ստացված եւ հավաքված տվյալների (բացառությամբ էներգակիրների վերաբերյալ տեղեկատվության, որը ներկայացնում են Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը եւ էներգետիկայի ոլորտի կազմակերպությունները, քանզի էներգակիրների վերաբերյալ բեռնամաքսային հայտարարագրերի եւ «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձեւ»-ի լրացման

ժամկետները կարող են չհամընկնել արտահանման եւ ներմուծման փաստացի ժամկետներին)՝ 2023 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության եւ ԵԱՏՄ երկրների միջեւ արտահանումը կազմել է 1 մլրդ 461 մլն դոլլար: Հայաստանի Հանրապետության եւ ԵԱՏՄ երկրների միջեւ ներմուծումը կազմել է 1 մլրդ 365 մլն դոլար, իսկ առեւտրաշրջանառությունը կազմել է 2 մլրդ 827 մլն դրամ:

Արտաքին եւ փոխադարձ առեւտրաշրջանառությունը 2023 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 20 տրիլիոն 723 հազար դոլար:

Համեմատության համար ասենք, որ 2020 թվականի Հայաստանի Հանրապետության եւ ԵԱՏՄ երկրների միջեւ առեւտրի շրջանառության արտահանումը կազմել է 255 մլն դոլար, ներմուծումը՝ 410 մլն դոլար, առեւտրաշրջանառությունը՝ 666 մլն դոլար:

Ստացվում է, որ 4 տարվա ընթացքում առեւտրաշրջանառությունը զգալի տեմպով աճ է գրանցել, սակայն թվերը դեռ իրավիճակ չեն ներկայացնում:

Բանն այն է, որ տնտեսագետները պնդում են, այս արդյունքը գրանցվել է, որովհետեւ Հայաստանը՝որպես տարանցիկ երկիր է դիտարկվել, եւ առեւտրաշրջանառության աճը զգալիորեն տնտեսությանն օգուտ չի տվել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

Ապրիլի 7-ից ուժի մեջ կմտնեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, որը փոփոխություններ է մտցնում սպանդային արտադրանքի եւ մսամթերքի սննդային արժեքի մասին պիտակավորման մեջ նշված տեղեկատվության վերաբերյալ «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներում: Այս մասին նշված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մամուլի հաղորդագրությունում:

Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ մորթված կենդանիների միսը եւ սպանդի արտադրանքը, այդ թվում՝ որպես հումք օգտագործվողները, բնութագրվում են սպիտակուցների եւ ճարպերի պարունակության բնական տարասեռությամբ:

Փոփոխություններով նախատեսված են սննդանյութերի պարունակության փաստացի արժեքների (սննդային արժեքի ցուցանիշների) շեղման թույլատրելի սահմանները մակնշման մեջ:

Արտադրանքի մեջ սպիտակուցը պետք է լինի պիտակավորման մեջ նշված մեծության 80 տոկոսից ոչ պակաս, ճարպը, ածխաջրերը, էներգետիկան արժեքը (կալորիականությունը)՝ պիտակավորման մեջ նշված մեծությունների 120%-ից ոչ ավելի:

Օրինակ, մսամթերքի մակնշման մեջ 100 գ մթերքի հաշվով 17 գ սպիտակուցի միջին արժեքի (100 %) նշման դեպքում սպիտակուցի փաստացի պարունակությունը, հաշվի առնելով նոր պահանջները, չպետք է լինի 13,6 գ-ից պակաս (80 %) 100 գ արտադրանքի հաշվով: 100 գ արտադրանքի հաշվով ճարպի 18 գ (100%) միջին արժեքի դեպքում ճարպի փաստացի պարունակությունը չպետք է լինի 21,6 գ-ից (120 %) ավելի 100 գ արտադրանքի հաշվով:

Համանման մոտեցում է նախատեսված Եվրասիական տնտեսական միության «Թռչնի մսի եւ դրա վերամշակված արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներով, որոնք գործում են 2023 թվականի հունվարի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կարգավորման նախարար Վալենտին Տատարիցկին նշում է, որ փոփոխություններն ուղղված են այն խնդիրների լուծմանը, որոնք կապված են սննդանյութերի պարունակության վերահսկման հետ՝ հաշվի առնելով հումքի առանձնահատկությունները եւ մսամթերքի վերամշակման արդյունաբերության յուրահատկությունը, ինչպես նաեւ այն գործողությունների կանխմանը, որոնք սպառողներին մոլորեցնում են պիտակավորման մեջ նշված սպիտակուցի, ճարպի ածխաջրերի պարունակության եւ կալորիականության փաստացի արժեքների անհամապատասխանությամբ: Վալենտին Տատարիցկիի կարծիքով՝ նոր պահանջների ներդրումը դրական ազդեցություն կունենա Միության երկրներում ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝ ՆՅՈՒԹԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի պատասխանը՝ «Ժողովուրդ» օրաթերթի «1 օրում 2 դրամաշնորհ՝ «ֆեյքերի» ՊՈԱԿ-ին» վերնագրով նյութի առնչությամբ:

««Ժողովուրդ» օրաթերթում (02.04.24) եւ ArmLur.am լրատվական կայքում հրապարակված «1 օրում 2 դրամաշնորհ՝ «ֆեյքերի» ՊՈԱԿ-ին» վերնագրով նյութի հետ կապված՝

հայտնում ենք, որ Կենտրոնում աշխատող որեւէ աշխատակից երբեւէ չի ստացել եւ չի իրականացրել կեղծ օգտահաշիվներ ունենալու, դրանցով գործողություններ իրականացնելու հանձնարարություններ ու երբեւէ չի զբաղվել վերոնշյալ արատավոր գործունեությամբ: Նշված նյութում նկարագրված գործելաոճն անընդունելի եւ դատապարտելի է կառույցի տնօրինության եւ աշխատակիցների համար:

Կենտրոնն իրականացնում է բազմաթիվ կարեւոր գործառույթներ ու աշխատանքներ, որոնք թափանցիկ եւ տեսանելի են ՀՀ քաղաքացիների ու լրատվամիջոցների համար: Դրանց կարելի է ծանոթանալ iprc.am, orbeli.am, irazekum.am կայքերում:

Կենտրոնի ֆինանսական գործունեությունը նույնպես թափանցիկ է, ֆինանսավորումն իրականացվում է պետբյուջեի համապատասխան միջոցառումների համաձայն՝ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ կնքվող դրամաշնորհային պայմանագրերի հիման վրա, որոնց համապատասխան ներկայացվում են անհրաժեշտ բոլոր հաշվետվությունները, իսկ գնումների գործառնությունները եւս օրենքի պահանջներին համապատասխան ամբողջությամբ հրապարակվում են»:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Եղվարդ ՀԷԿ» ՍՊԸ-ի՝ Կոտայքի մարզի Նախիր համայնքի Զորավան գյուղի վարչական տարածքում «Եղվարդ» փոքր կառուցման նպատակով «Գեղի-Եղվարդ» ոռոգման ջրանցքից 600.0 լ/վ ջրառ իրականացնելու՝ ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից -18-ը դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 16: 00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԾԵՐ

ԱՐՎԵՍՏԸ ԺԱՄԱՆԱԿ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Ապրիլի 3-ը հայ մշակութային եւ ազգային կյանքում առնչվում է մի շարք դեմքերի եւ դեպքերի հետ: Այն գրող Ղազարոս Աղայանի եւ դերասան Ազատ Շերենցի ծննդյան օրն է, ինչպես նաեւ այն օրը, երբ բացվել է ամենայն հայոց բանաստեղծի տուն-թանգարանը:







1993 թվականի հենց այս օրն են հայկական զինված խմբավորումները, որոնք հետագայում պիտի դառնային ՀՀ զինված ուժերի հիմնասյունը, դուրս գալիս Օմարի լեռնանցք, որի հետեւանքով ադրբեջանական բանակը, մեծ կորուստներ տալով, անցնում է Մռավի լեռնաշղթան եւ Քարվաճառը թողնելով հեռանում:

Ղազարոս Աղայանն ու հայ գրականությունը

«Կարծես հեքիաթների միջից եկած, մեր իրականության մեջ քայլող մի զորապետ իշխան լիներ, լեռների քաջ որսկան, աշխարհեաշխարհ կտրող քարավանապետ». ահա այսպես է մեծանուն գրողին բնութագրել մեկ այլ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը:

Գրող, մանկավարժ եւ հրապարակախոս Ղազարոս Աղայանը, որը հեղինակել է մանկավարժական-մեթոդաբանական բազմաթիվ աշխատություններ, հեղինակն է նաեւ երկար տարիներ հայկական դպրոցներում ամենատարածված այբբենարանի՝ «Ուսումն մայրենի լեզի» անվանմամբ. այն նախատեսված էր առաջինից չորրորդ դասարանի երեխաների համար:

Աղայանը մասնավորապես զբաղվել է տարրական ուսուցման հարցերով եւ մշակել մայրենի լեզվի ուսուցման ու գրագիտության համակարգ: Նա ներդրում ունի նաեւ «Արարատ» հանդեսի զարգացման, ինչպես նաեւ հայ թարգմանական գործի զարգացման հարցում: Աղայանը հարստացրել է մեր թարգմանական գրականությունը ռուս եւ արեւմտաեվրոպական դասական գրողներից կատարած թարգմանություններով ու փոխադրություններով՝ թարգմանելով այնպիսի գրողների, ինչպիսիք են Իվան Կռիլովը, Ֆրիդրիխ Շիլլերը, Հայնրիխ Հայնեն, Լեւ Տոլստոյը, Ուիլյամ Շեքսպիրը եւ այլք:

Աղայանը եղել է Հովհաննես Թումանյանի հիմնած «Վերնատուն» գրական խմբակի անդամներից: Նրա ստեղծագործությունների շարքում ամենահայտնիներից է «Անահիտ» հեքիաթը, որի հիման վրա 1947 թվականին ֆիլմ, իսկ 2014 թվականին մուլտֆիլմ է նկարահանվել:

Ամենայն հայոց բանաստեղծի 30-ամյակն ու տուն-թանգարանի բացումը

Թանգարանը, որի ճարտարապետը Գրիգորի Աղաբաբյանն է, բացվել է 1953 թվականի ապրիլի 5-ին: Թանգարանի հիմնադիրը եւ առաջին տնօրենը բանաստեղծի դուստրն է եղել՝ Աշխեն Թումանյանը, ցուցադրվել են ձեռագրերի պատճեներ, ֆոտոփաստաթղթեր եւ Թումանյանի ինքնատիպ ստեղծագործությունների բնօրինակներ՝ ընհանուր առմամբ ավելի քան 18 հազար ցուցանմուշ:

Առաջին հարկում կարելի է տեսնել մեծ գրողի կյանքի ուղին՝ կյանքի եւ գործունեության վերաբերյալ նյութեր, այդ թվում՝ լուսանկարներ, նամակներ, փաստաթղթեր, ձեռագրեր, հեղինակի հեքիաթների եւ պատմվածքների թեմաներով ստեղծված պատկերներ:

Երկրորդ հարկում ներկայացված է Թումանյանի թիֆլիսյան վերջին բնակարանը՝ նույնությամբ վերարտադրված եւ կահավորված:

Մուտքին այցելուներին դիմավորում են «Անուշ» օպերայի հնչյունները՝ զուգորդված «Լոռվա ձորը» համայնապատկերով: Թանգարանում կարելի է նաեւ նկարվել Սասունցի Դավթի եւ Քուռքիկ Ջալալու հետ՝ համապատասխան հավելվածի միջոցով:

Տղամարդը՝ «Տղամարդիկ» ֆիլմից. Ազատ Շերենց

Թիֆլիսում ծնված Շերենցը հայկական կինեմատոգրաֆիկ կատակերգության հիմնադիրներից է: ՀԽՍՀ ժողովրդական արտիստը կարիերան սկսել է 1931 թվականին Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնում, ապա մեկնել Մոսկվա՝ հայկական թատրոն-ստուդիայում ուսանելու: Աշխատել է Գյումրիի թատրոնում եւ 1968-ից սկսել նկարահանվել «Հայֆիլմ» ստուդիայի ֆիլմերում, որոնցից հատկանշական են «Տղամարդիկ», «Մենք ենք մեր սարերը», «Սերոբի ծառը», «Խաթաբալան» եւ «Խնձորի այգին»:

Պետք է նշել, որ դերասանի մասնակցությամբ «Տղամարդիկ» ֆիլմը հայ իրականության ամենաազդեցիկ, ամենահրաշալի եւ ամենագրավիչ ֆիլմերից է, որը բարձր մասնագիտական մոտեցման եւ նվիրվածության արդյունք է: Եթե չեք դիտել, ապա հիշե՛ք. արվեստը ժամանակ չի ճանաչում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԱՄԲՈՆ ԸՆՏԱՆԻՔ Է

Երեւանում մեկնարկեց սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությունը, որը այսուհետ կանցկացվի Հայաստանի մայրաքաղաքում:

Բացման պաշտոնական արարողության մեկնարկին վավերագրական ֆիլմով ներկաներին ներկայացվեցին Հայաստանում սամբոյի զարգացման փուլերը:

Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ Միքայել Հայրապետյանը, ողջունելով ներկաներին, բարի գալուստ մաղթեց հյուրերին եւ հույս հայտնեց, որ սամբոյի մրցաշարերը կլինեն խաղաղության տոներ ամբողջ աշխարհի համար:

«Սամբոն ընտանիք է, ընտանիքը՝ ուժ, ուժը՝ խաղաղությունը: Նախորդ տարիների մրցաշարերի գերազանց կազմակերպվածության շնորհիվ միջազգային ֆեդերացիան Հայաստանին տվեց աշխարհի գավաթի խաղարկությունը հյուրընկալելու իրավունքը»,-ասաց Հայրապետյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ընդգծեց, որ Հայաստանը աշխարհի սպորտային քարտեզի վրա իր ուրույն տեղն է գրավում:

«Թող հաղթեն ուժեղագույնները, հայտարարում եմ մրցաշարը բացված»,-ասաց Գիլոյանը:

Սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությանը մասնակցում են 17 երկրի մոտ 300 մարզիկներ:

Սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությունը կեզրափակվի ապրիլի 5-ին:

ՆԱՀԱՆՋԵԼ Է

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը նախորդ ամսվա համեմատ նահանջել է ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում:

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման վարկանիշային թարմացված աղյուսակը: Հայաստանի ազգային հավաքականը նահանջել է մեկ հորիզոնականով եւ այժմ զբաղեցնում է 95-րդ տեղը:

Արգենտինան պահպանել է առաջատարի դիրքերը: Երկրորդ տեղում Ֆրանսիան է, իսկ լավագույն եռյակը եզրափակում է Բելգիայի հավաքականը:

ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԻ

Միջազգային օլիմպիական կոմիտեն (ՄՕԿ) ռուսաստանցի Աբդուլռաշիդ Սադուլաեւին թույլ չի տվել մասնակցել Բաքվում կայանալիք օլիմպիական վարկանիշային մրցաշարին:

Այս մասին գրում են ռուսական ԶԼՄ-ները: Բաքվում կայանալիք ըմբշամարտի վարկանիշային մրցաշարը կկայանա ապրիլի 5-7-ը:

Հայաստանը եւս չի մասնակցելու Բաքվի վարկանիշային մրցաշարին: Բացի այս, կա եւս մեկ վարկանիշային մրցաշար, որը կկայանա Ստամբուլում:

Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը:

«ԳՈՅ»

ԱՆԺԱՄԿԵՏ ՆՍՏԱՅՈՒՅՑ՝ ՓԱԿ ԴՌԱՆ ԱՌԱՋ

«Գոյ» թատրոնի ստեղծագործական կազմը ապրիլի 3-ից անժամկետ նստացույց է իրականացնում թատրոնի փակ դռան առաջ:

Նրանք դիմում են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին, որպեսզի վերջիններս թատրոնին հնարավորություն տան շարունակել ստեղծագործական գործունեությունը՝ որպես անկախ թատրոն, սակայն՝ «Գոյ»-ի բեմում:

«Դիմում ենք նաեւ իրավապահ մարմիններին, դատարանին, որ մեր խախտված իրավունքները վերականգնվեն»,- թատրոնի ֆեյսբուքյան էջում հրապարակված տեսանյութում ասում է «Գոյ»-ի ռեժիսոր Սարգիս Արզումանյանը:

Ավելի վաղ հայտարարվել էր, որ, ՀՀ կառավարության որոշմամբ, նախատեսվում է «Գոյ» թատրոնի վարչական հատվածը կրճատել, իսկ թատրոնի ստեղծագործական կազմը՝ «Գոյ» թատերախումբ անունով, կշարունակի գործունեություն ծավալել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տանիքի ներքո: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, որը նախագծի հեղինակն է, վստահեցրել էր, որ այդ պարագայում «Գոյ»-ը կարող է ընդլայնել իր հնարավորությունները:

2024 թվականի հունվարի 30-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրը «Գոյ» թատրոնը վերակազմակերպել է՝ միավորելով այն Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հետ:

«Գոյ» թատրոնի ստեղծագործական կազմը դեմ է միավորմանը:

Թատրոնի միջազգային օրը՝ մարտի 27-ին, Սարգիս Արզումանյանը դիմել էր թատերական գործիչներին՝ խնդրելով նրանց աջակցությունը: «Եթե կարծում եք, որ այս քաղաքին պետք է «Գոյ» թատրոնը, խնդրում եմ աջակցել մեզ: Համապատասխան փաստաթուղթ է կազմվել, պետք է այնտեղ ստորագրել, տալ համաձայնություն, որ «Գոյ» թատրոնը Երեւանին անհրաժեշտ է որպես անկախ թատրոն: Այդ փաստաթուղթը կուղարկվի Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ի դեմս ՀՀ վարչապետի, որպեսզի նրանց կայացրած որոշման մեջ լրացումներ կատարվեն, կամ այլ մեխանիզմներ մշակվեն, եւ «Գոյ» թատրոնը դառնա անկախ թատրոն ու ստեղծագործի այն վայրում, որտեղ աշխատել է»,-նշել էր նա:

● *Ապրիլի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Արաքսյա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,
2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,
3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,
4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),
5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,
6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում անհրաժեշտ է նաեւ փաստաթուղթ՝ զինվորական կոմիսարիատից:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Արամ Սողոմոնյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» պորտուգալացի հարձակվող Ժոաու Ֆելիքսը հույս է հայտնել, որ կատալոնական թիմի գլխավոր մարզիչ Չավին կվերանայի իր որոշումը եւ ամռանը չի լքի պաշտոնը:

«Ես կցանկանայի, որ Չավին վերանայեր իր որոշումը: Նա շատ երիտասարդ մարզիչ է եւ ունի գերազանց գաղափարներ: «Բարսելոնայում» նրան շատ են սիրում»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	- 3 - 7 / +14 + 18
Կոտայքի լեռներ	- 3 - 6 / +14 + 17
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 / +21 + 23
Գեղարքունիք	- 3 - 6 / +13 + 16
Լոռի	- 1 + 3 / +17 + 21
Տավուշ	- 1 + 2 / +18 + 22
Արագածոտնի լեռներ	0 + 3 / +14 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 / +21 + 24

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+ 2 + 5 / +24 + 26
Արմավիր	+ 1 + 4 / +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 / +21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 / +24 + 26
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 / +24 + 26
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 / +23 + 25
ԼՂՀ	- 1 + 3 / +22 + 24
Երեւան	+ 6 + 8 / + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*